

համաձայն թաղեցին մարմինը այրի մը մէջ ուր թաղուած էին իր ազգականներէն շատերը: Վերջին անգամ Յիսուս հակեցաւ ննջեցեալին և տուաւ անոր վերջին համբոյրը՝ վեհագոյն օրհնութեամբ մը (Պատմ. Յովսեփայ, Իէ-ԼԲ) (De Beth. à Naz., P. Olivier, էջ 408-416):

Ս. Կուսի *sans stérilité* աւանդութիւնը. — Ս. Կուսի բնական տան տեղւոյն մէջ կը գտնուէր այր մը որուն արեւելեան կողմը կային երկու մարմարեայ սիւներ, իրարու մօտ, հին քրիստոնեաներու կողմէ հաստատուած, այն տեղւոյն վրայ ուր կը գտնուէին Ս. Կոյսն ու հրեշտակապետը. այս պարագան կը յիշեն արեւելքի քրիստոնեաներն ու Արաբները:

Այս սիւներէն մին Արաբները հինգ թղաչափ խարխսէն կը կոտրեն գանձ փնտուելու նպատակաւ, մընացեալ մասը զարմանալի կերպով օդին մէջ կը մնայ իր տեղը: Միջացաւ, երիկամուռքի և կամ ուրիշ հիււանդութիւններ ունեցողները և յղի կանայք երբ այս սիւնին կը մօտենան, կամ իրենց գօտին անոր բոլորտիքը շրջապատեն՝ անմիջապէս կը բժշկուին: Այս սիւները այրին մէջտեղը հաստատութեան համար չեն գետեղուած, այլ իբր խորհրդանշան տեղւոյն սրբութեան, ինչպէս կը հաստատեն բարեպաշտ քրիստոնեաներ (Մար. Ա. հատ. էջ 486-89):

Սեղան Քրիստոսի կամ հացերու հրաշքը. — Նազարէթի արեւելեան կողմը հասարակ ճանապարհին վրայ բոլորակ քար մը կը տեսնուի 47 թղաչափ, և կը կոչուի Սեղան Քրիստոսի: Աւանդութիւնը կ'ըսէ թէ մեր Փրկիչը այս քարին վրայ իր աշակերտներուն հետ